

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 31 ՄԱՐՏ, 1932

ԹԻԻ 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Քրիստոնեական Բեմի Պատգամը,

Տ. Ճ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Սուրբոյ Հայուքեան Համար

Ներկայութիւնդ

Տր. Լ. Օ. Լի

Սիկիլիացի Առաքակը

ՓՐՈՅ. Կ. ԹՈՒՄԱՆԱՆ

ՓՐՈՅ. Ա. Կ. ԿԻԻԼՊԵՆԿԵԱՆ

ՎԵՐ. Կ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԹՐԳՄ. ԱՊԱՃԵԱՆ

ԱՅԼԵԻԱՅԼ

Աւետարանչական Յանձնախումբի Ժողովը

Ծնողներու

Մարմինդ

ՋԱՆԻՑՈՒ ԷՋԸ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՔ ՀԱՅԻ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, տարեկան բաժնեգրինք է 150 ղրուշ սուրի։ Սուրիայ համար, և մէկ աւել տուլար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար։

Յօդուածներու բնագիրները չեն ղըրկուիր եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ։ չհրատարակուող յօդուածներու համար պէտք է ղրկել փոստի ծախսը։

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկ էջին վրայ մեկանով, գիւրընթեռնի մաքուր կերպով։

«ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ» ԿԸ ՆՈՒԻՐԷ

Վեր. Ս. Ս. Մանուկեան Հալէպ, մէկ տարուան Նոր Աւետարեր կը նուիրէ հետեւեալ հասցէներուն. —

Տր. Մանուկեանի,

Պիսքէնթա, Լիբանան,

Տիար Բ. Մանուկեանի

Պուէնոս Այրէս

Տիար Պենոն Ավանոզեանի

Պուէնոս Այրէս։

«ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ»Ի ՄԱՏԵՆԱՇԱՐԸ

Պատանիներու ընթերցանութեան համար կրթիչ գիրքերու պակասը խիստ զգալի է։ Այս կէտը նկատի առնելով «Նոր Աւետարեր»ի խմբագրութիւնը այս անգամ հրատարակած է՝

ԲԱՐՈՅԱՎԷՊԵՐ

անուն հատորիկ մը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական և բարոյացուցիչ 25 իրական պատմութիւններ և պատմուածքներ։ Ամէն պատանի, ինչպէս նաև դաստիարակներ և ծնողներ շատ օգտակար պիտի գտնեն զայն։ Գինն է 25 ղրշ. սուրիական կամ 50 սէնթ (Ամերիկայի Եգիպտոսի համար)։ Դիմել խմբագրութեան հասցէին։

ՄԻԷՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 31 ՄԱՐՏ, 1932

ԹԻԻ 5

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԵՄԻ ՊԱՏԿԱՄԸ

Ամէն դասակարգէ, ամէն լեզուէ, ամէն ցեղէ մարդիկ աւելի քան երբեք Յիսուսի կեանքը կ'ուսումնասիրեն որոշ հայեցակէտէ մը գիտելով զայն: Անհաւատն ու հաւատացեալը, քրիստոնեան և մահմետականը կամ հրեան, ընկերվարականն ու բանաւորը, ուսուցիչն ու քարոզիչը, բարոյագէտն ու փիլիսոփան, յեղափոխականն ու բարեկարգիչը, ևայլն իրենց տեսակէտին, փափագին, և իրենց անձնաւորութեան տեսակին համեմատ բան մը կը գտնեն Յիսուսի մէջ և իրենց գաածին համեմատ ալ արժէք մը կը վերագրեն Անոր: Այս արժէքը զայն գտնող անձին չափանիշն իսկ է, որուն համեմատ ինք պիտի վարձատրուի (Մատթ. 10. 41): Ահա այս կը կազմէ այդ անհատին պատգամը:

Միայն մէկ կէտէ գիտելու չէ այս Դէմքը՝ զայն աւելի լաւ հասկնալու համար: Միայն պատմութեան որոշ մէկ շրջանին լոյսոյն ալ գիտելու չէ՝ զայն աւելի ճիշդ ըմբռնելու համար: Եւ սակայն հակառակ քսան դարերու ջանքերուն, հակառակ ամէն դասակարգէ մար-

դերու կատարած գիւտերուն՝ Անիկայ, Յիսուս, մնացած է միշտ անսպառելի: Նկարիչը տակաւին չէ կրցած Անոր զէմքը կատարելապէս գծել, բանաստեղծը տակաւին չէ կրցած Անոր հոգին մեղի լման թարգմանել, բարոյագէտն ու փիլիսոփան չեն կրցած տակաւին կատարելապէս Անոր վարդապետութիւնն ու սկզբունքները մեղի պարզել, միսթիք հաւատացեալը տակաւին չէ կրցած Անոր կեանքին խորքը լման չափել: Քրիստոսի մէջ միշտ պիտի մնայ բան մը որ մարդուն հասողութենէն կարծես խոյս կուտայ: Հետեւաբար ամէն դար, ամէն մարդ պիտի շարունակէ իր պատգամը բերել Քրիստոսէ, և Քրիստոսի մասին:

Բայց ի՞նչ է այն պատգամը զոր քրիստոնէական բեմը ամէն տեղ և ամէն դար պէտք է տայ աշխարհի: Պէտք է քարոզել Քրիստոսի վսեմ բարոյական սկզբունքները, Աստուծոյ և մարդու մասին վարդապետութիւնները: Սակայն, ասիկայ բաւական չէ, և նոյնիսկ անզօր և երբեմն անարժէք կը մնայ առանձինը: Քրիստոնէական բեմը կարծես

անտեսած է այս կէտը. հոն կը քարոզուի յաճախ ամէն բան բացի անկէ որ անհրաժեշտօրէն պէտք է: ՔՐԻՍՏՈՍ ԵԿԱԻ ՄԵՂԱԽՈՐԸ ՓՐԿԵԼՈՒ, ՈՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԻՍԿ ԱՐԻԻՆ ԹԱՓԵՑ ԽԱՉԻ ՎՐԱՅ: Ահա այս է այն պատգամը զոր քրիստոնէական բոլոր պէտք է արտայայտեն աշխարհ միշտ կը կարօտի:

Ստորեւ կը ներկայացնենք երկու հատուածներ, որոնք երկու յայտնի զէմքերու դադարաւորները կը ցոյցնեն այս նիւթին մասին: Լորտ Փէրօի, նախկին Բրիտանիոյ Կրթական նախարարը, եկեղեցական ժողովի մառջեւ ճառի մը մէջ ըսած է.

«Քրիստոնեայ եկեղեցին աշխարհին տալիք պատգամ մ'ունի. բայց պատգամ մը կրնայ տրուիլ կենդանի լեզուով մը միայն: Եկեղեցիին մէջ լեզուներու խառնակութիւն մը կայ, և անոր անգամները կը խօսին թոյլ բառեր որոնք տասնեակ մը իմաստներ կրնան հասկննել...: Մենք ա'լ խաչեալ Քրիստոսը չենք քարոզեր այլ «Խաչի ըսկզբունքը»: Փրկութիւնը և վերածնունդը հոգեւոր զարգացումի գործառութեան մէջ կորսուած են: Աւետարանը ինքը փոխուած է «Նոր Կտակարանի Բարոյագիտութեան»:

Թոյոհիքօ Բակաւա, Ճաբոնցի մեծ քրիստոնեայ առաջնորդը, ըսած է.

«Լերան Քարոզը բարոյականութեան բարձրագոյն կէտն է: Բայց մինչեւ որ մենք Խաչը չունենանք Լերան Քարոզը պարապ խօսք է միայն: Չինաստանի մէջ մենք շատ գեղեցիկ բարոյական վարդապետութիւններ ունինք: Մենք կիսով և բով Սուրբ ուսուցումներուն մէջ մենք գրեթէ Լերան քարոզին հոգին ունինք, կեցող պոետապական աղանդին աւսուցումը Լերան Քարոզին շատ կը մօտենայ: Բայց ասոնք Խաչ չունին: Մենք կիսով և բով Սուրբ խաչին վրայ չմե-

ռան: Քրիստոսի բարոյական վարդապետութեանց խորքը, Իր իսկ վարդապետութիւնները Իր իրականացնելուն մէջ և Խաչին վրայ Իր յաղթանակին մէջ կը կայանայ: Խաչը շատ բան կը նշանակէ. Իր յաղթանակը ցաւի վրայ, Իր յաղթանակը տխրութեան վրայ, Իր Իր յաղթանակը մահուան վրայ, Իր պնծնազոհութիւնը, անձնատիրութիւնը, Թագանքի մէջ Իր քաջութիւնը: Այլապէս Երկրական սկզբունքը իրապօրծուած է Յիսուսի Խաչին մէջ»:

«Քրիստոսի սիրոյն համար տառապելու սկզբունքը, զոր Պօղոս կը յայտնէ Փիլիպ. Թուղթին 1. 29 համարին մէջ (Վասնզի ձեզի արտօնութիւն տրուեցաւ Քրիստոսի համար՝ ոչ թէ միայն Անոր հաւատալ, հապա անոր համար չարչարուիլ ալ), իրապէս Արեւելեան Քրիստոնէութեան համար մեծ հիմնական վարդապետութիւն մ'է: Մեզի՛ աւելեւեան քրիստոնեաներու՝ Քրիստոսի սիրոյն համար ցաւի, մահուան, տրտմութեան և բոլոր չարիքի յաղթել կարենալ ամէն բան կը նշանակէ:

«Իր իսկ ցաւին համար տխրիլ իրական տխրութիւն է. բայց ուրիշներու համար ցաւիլ և տառապիլ օւրախութիւն մ'է: Ես ասիկայ սորվեցայ երբ ստորին թաղերու մէջ կը գործէի, և երբ բանտն էի:

«Խաչելութեան մէջ պարզապէս ընկերային աւեսարան մը չունինք: Խաչելութեան մէջ Աստուծոյ աւետարանը, մարդկութեան աւետարանը ունինք: Խաչելութեան մէջ մենք կրօնքի ճշմարտութիւնը կը գտնենք: Մենք հոն կը գտնենք ճշմարտութիւնը, կեանքը, և ճամբան: Բայց ես ձեզի կ'ըսեմ թէ Խաչելութիւնը վարդապետութիւն մը չէ: Անիկայ կեանքի ճշմարտութիւն մ'է»:

S. Ճ. Խ.

ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԻ ԺՈՂՈՎՐ

Միացեալ Միսիոնարական Խորհուրդի — որուն կ'անդամակցին Մերձաւոր Արեւելքի գրեթէ բոլոր միսիոնարական մարմինները և արաբախօս և Հայ Աւետ. եկեղեցիները — Աւետարանչական Յանձնախումբը Փետր. 3-5ին իր ժողովը ունեցած է Հալէպ: Հայ Աւետ. եկեղեցիին հոն ներկայացուցած է Վեր. Ս. Ս. Մանուկեան: Ժողովիս ընդհանուր նիւթը եղած է «Սուրիոյ Աւետ. ոյժերուն մէջ աւետարանչական խանդ յառաջ բերելու միջոցները», հետեւեալ չորս բաժիններու տակ: Ասիական կը քաղենք մեզի զրկուած ընդարձակ տեղեկագրէն:

1. Գործիչներու պահերը. —

«Հօգիւով լիցեալի, ուէ ծանօթ մեղքէ աղատիլ, զԱստուած գիտնալու որոշ դիտաւորութեամբ ազօթիլ և ուսումնասիրել, դաւանական ոչ-էական կէտերը չչեղաւել, այլ Քրիստոսը՝ մեր կենսական պահանջքը՝ մտքի մէջ ունենալ, երբեմն մասնաւոր խոհումի և ազօթքի համար նոյնիսկ ամբողջ օր մը նուիրել. եթէ կարելի ըլլայ այցելել տեղեր ուր Աստուծոյ հոգին զօրաւոր կերպով կը գործէ (զոր օրինակ Պարսկաստան), անձնապէս աւելի աշխատիլ, աւետարանչական գրեւածքներ բաշխել և գիտնալ, հոգեւոր մթնոլորտ անեղծ ժողովներու յաճախել, և ամէնէն աւելի Քրիստոսը ապրիլ: Եկեղեցիներու մէջ մեր քարոզութեան և պաշտամունքին կեդրոնը Քրիստոս պէտք է ըլլայ, հովիւը երբեմն պէտք է անդամները հաւաքէ եկեղեցիին հոգեւոր կեանքը և վիճակը խորհրդակցելու, արթնութեան համար ազօթելու և զայն ծրագրելու մասին ժողովներ սարքել, մասնաւոր պաշտամունքներու համար մասնաւոր խօսողներ ունենալ:»

2. — Եկեղեցիին պաղած անհատներու

մէջ աւետարանչական գործ. «Կարեւոր թիւով մարդիկ, մանաւանդ երիտասարդներ, եկեղեցիէն դուրս կը մնան: Կան ծնողներ որոնք երբեք անհանգիստ չեն ըլլար երբ իրենց զաւակները եկեղեցի չեն յաճախեր: Պաղածները շահելու համար պէտք է անոնց հանդէպ բարեկամական ոգի ցուցնել, պէտք է անոնց գործ տալ, և մանաւանդ առօրեայ կեանքին մէջ մեր քրիստոնէական փորձառութեամբ ցուցնել թէ կրօնքը կենսական կարեւորութիւն մ'ունի: Այս նպատակաւ թիւագրիլի են նաեւ երախաներու բաժնի գործ, մանուկներու քարոզներ, եկեղեցիի Զանից ընկերութեան անդամները հետաքրքրել զօրի երիտասարդներով:»

3. — Աւետարանչական գործ Արեւելեան հիւն եկեղեցիներու մէջ: Տեղեկագրին մէջ յատկանշական կը գտնենք սա տողերը. «Ուղղափառ Արեւելեան եկեղեցիներու մէջ մեր բարեկամներուն օգնելու լաւագոյն կերպն է զանոնք քաջալերել իրենց իսկ եկեղեցիին մէջ աւելի լաւ քրիստոնեաներ ըլլալու համար...» «Ամէն պարագայի տակ մենք պէտք է ազատ միանք յարանուանական, փարթիական փափազներէ և պէտք է անոնց քարոզինք սիրով և պէտք է անոնց հետ բաժնենք իրենց ցաւերը, զրժուարութիւնները, մանաւանդ երբ անոնք տկար և բաժանեալ են:»

4. — Աւետարանչական գործ ոչ-քրիստոնէականներու մէջ: Ասոր համար կը թելադրուի քրիստոսը չներկայացնել վարդապետական վիճաբանութիւններով, և չգահանալ միայն ծառայութեամբ Քրիստոսի հոգին ցուցնել, այլ ասոր հետ մէկտեղ Քրիստոսն ալ ուսուցանել, քարոզել, այսինքն Քրիստոսի հոգին ցուցնել կեանքով և խօսքով: Նոյնպէս կը թիւագրուի թէ քրիստոնեայ գոր-

ծիչները, միախոնարները պէտք չեն իրենք զիրենք սոսկ իբր կրթական կամ բժշկական կամ ուրիշ տեսակ գործիչ մը ներկայացնել ոչ-քրիստոնեաներուն, այլ համարձակօրէն սկիզբէն բացատրել թէ «մեր կոչումն է Բրիտոսը թարգմանել այն ամէնուն որ կը փափագի վնայն գիտնալ» Այս գործին մէջ ազօթքի ոյժը պէտք է լաւ գնահատել:

Սուրբոյ մէջ շատ մը տեղեր լքուած դասակարգեր կան կարօտ աւետարանական լոյսի, զոր օրինակ գնչուներ, բանտարկեալներ, զինուորներ եւ հանրային կիներ: Ժողովս կը թելադրէ որ Աւետարանական կազմակերպութիւնները նկատի առնեն պահանջները եւ կարելի միջոցները:

Տեղեկագիրը կը վերջանայ գնահատելով եկեղեցական միութեան շարժ կատարուող ջանքերը, և յայտնելով որ իրական միութիւնը հոգեւոր է, որուն համար Բրիտոս ազօթեց (Յովհ. 17): Եւ ապա կը շեշտէ պէտքը մեր եկեղեցիներուն մէջ հոգեւոր արթնութեան: Եւ կը յանձնարարէ որ հովիւները եւ ուրիշ պատասխանատու անձերը երկտասարդութիւնը եկեղեցիի անդամակցութեան շահելու համար միջոցներ խորհին, եւ թէ Բրիտոսը աւելի ճշմարիտ կերպով հասկնալու եւ ապրելու մէջ՝ ուրիշ եկեղեցիներու պատկանող անձերու օգնելու հարցը պէտք է աւելի լրջօրէն նկատի առնուի:

ԾՆՈՂՆԵՐՈՒ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՈՒՇՈՂԻՐՈՒԹԵԱՆ

Ծնողներ, ձեր մանուկներուն հետ քաղցրութեամբ և համբերութեամբ վերաբերուեցէք:

Ձեզի հանդէպ սէր, վստահութիւն ներշնչեցէք անոնց, և ոչ վախ:

Վախը կը պակսեցնէ կենսունակու-

թիւնը, կ'անդամալուծէ ջանքը: Աւելի լաւ վարք ունենալու համար ամէն զգացում կը բթացնէ:

Անոնց երբեք մի՛ զարնէք կամ խիստ լեզուով մի՛ յանդիմանէք: Հարուածը կը փնասէ և կը վիրաւորէ հոգին նոյն իսկ մարմինը փնասածէն աւելի:

Յիշեցէք որ ձեր մանուկն ալ ճիշդ ձեզի նման դժուար և ջղային պահեր կ'ունենայ: Յանդիմանելով՝ անոր յուսալքումի վիճակը մի ծանրացներ:

Նոր գաղափարով մը, նոր պղտիկ գործունէութեամբ մը մանուկին մըտքին նոր ուղղութիւն մը տուր, եւ այս կերպով անհնազանդ մեղամաղձոտ տրամագրութիւնը փարատէ:

Անոր կամքը կոտրելու մի՛ աշխատիք: Աւելի լաւ խորհելու առաջնորդեցէք զայն:

Յիշեցէք որ քաղցր պատասխանը բարկութիւնը կ'իջեցնէ: Կեանքը հաճելի եւ երջանիկ ըրէք, եւ այս կերպով ձեր կեանքն ալ աւելի հանգիստ պիտի ընէք:

Բէրի մեզի կը պատմէ որ զգայուն ձիւ մը ուղղեալ խիստ խօսք մը անոր սրտին արոփիւնը վայրկեանը 10 պարկեր աւելի պիտի արագացնէ:


«Մանուկը շատ նուրբ փոքր բան մըն է»:

«Փոխուած մարդերը միայն կրնան փոխել աշխարհը»:

«Կեանքը ոմանց համար կատաղի ձիագնացութիւն մ'է, ուրիշներուն համար՝ վսեմ պանդխտութիւն մը»:

«Յիսուս զԱստուած տեսնելու մասին թէպէտ շատ քիչ խօսեցաւ, սակայն, աւել մէկուն ըրածէն աւելի զԱստուած կենդանի կերպով պարզեց իր ժամանակակիցներուն հոգեւոր աչքերուն առջեւ: Անիկայ Աստուծոյ մէկ տեսիլքը տուաւ, մինչդեռ ուրիշներ անոր մասին միայն խօսեցան»:

ՍԻՒՐԻՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ՓՐՈՖ. ԿԱՐԱՊԵՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ, որուն յօբնելանը արժանավայել չքեղու-
թեամբ կատարուեցաւ 1930 Ապրիլ 6 ին,
նիւ Եսրքի մէջ, մեր ամէնէն արդիւ-
նաւոր և պապուաւոր աշխատաւորնե-
րէն մէկը եղած է: Ծնած է 1852 ին
Մարզուան, իր ուսումը առած է Լի-
բանոնի Հայ Կաթօլիկ վանքը, ապա
Մարզուանի Ամերիկեան Բարձր Դպ-
րոցը, որ ետքը եղաւ Անաթոլիա Գո-
լէճ, 1874 ին իր ուսումը կատարագոր-
ծելու կ'երթայ Լօզան, ուր գիտական
ճիւղը աւարտելէ վատ աստուածաբա-
նական լման ուսում ևս կ'ստանայ:
Ապա կը հրաւիրուի Մարզուան Ամե-
րիկեան Դպրոցին մէջ դասախօսելու:
12 տարի մինչև 1892 կը գործէ հոս
մեծ արդիւնաւորութեամբ. մեծ բա-
ժին կ'ունենայ դպրոցը 1886 ին գոլէճի
վերածելու մէջ: Կառավարութեան
կասկածին հնթարկուելով կը ձերբա-
կալուի Փրոֆ. Յ. Թ. Գայանի հետ
և իր կնոջ Զանքերուն շնորհիւ կախա-
ղանէ փրկուելով արտասահման կը ղըը-

կուին: Լոնտոնի մօտ, Շիկուէլ, կը հաս-
տատէ որբանոց դպրոց մը, որ 15 տար-
ուայ կեանք կ'ունենայ: Մինչև վերջ
կը գործէ օտարներու մէջ հայաւապատ
գործունէութիւն յառաջ բերելով, որուն
մէկ արդիւնքն է Լորտ Մէյրս Թընտ ա-
նուն բարեօրական ընկելութիւնը:
Հեղինակն է մի քանի գիրքերու որոնց-
մէ հրատարակուած են Հոգեբանութիւնը
և Պատմութիւնը Արեւելեան Հարցի: Կա-
րեալ հայ թերթերու մէջ իր լուրջ, ող-
ջադատ և շինիչ գրութիւնները մեծ հե-
տաքրքրութեամբ կարդացուած են:
Մեծ հաճոյքով կը հրատարակենք իր
հետեւեալ յօդուածը: Ծ. Խմբ.

Հաճոյքով ու հետաքրքրութեամբ է
որ կը կարգամ Նոր Աւետարեցը՝ որ
նման ուրիշ Հայ Գաղութներէ հասնող
թերթերու՝ ստոյգ պակաս մը կը լինը-
նէ: Ասոնց ամէնքն ալ խիստ կարեւոր
գերեր կը կատարեն սրտած Հայու-
թեան մէջ: Ունին իրենց գիտական,
կրօնական, բարոյական և շինիչ, հրա-
հանգիչ յօդուածները որոնցմէ վատ այդ
գաղութներու ներքին, ազգային, արեւ-
տեսական, քաղաքական, մինչև իսկ
միջազգային լուրեր կը հաղորդեն, ի-
րարու կը կապին այդ ձրձընուած գա-
ղութները:

Այս Հայ գաղութները իրարու կա-
պող, զիրար ճանչցնող խիստ չահեկան
գեր կատարող թերթերէն մին նկատե-
լով է որ կը շնորհաւորեմ Նոր Աւետա-
րի բերեցիթը: Գաղութներ Հայ իրա-
կանութեան մէջ նոր երեւոյթ մը չեն:
Հին ժամանակներ ալ գաղութներունե-
ցած ենք, բայց ցանցառ, իրարմէ հե-
ռու, երբեմն անտեղեակ, անհաղորդա-
կից, օրովհետեւ հաղորդակցութեան
առջի միջոցներէն զուրկ էին: Մինչդեռ
ներկայիս մեծ մասամբ Հայութիւնը

ցրուած է գաղթականութեանց մէջ և ազգային միութիւն կը պահէ թերթերուն միջոցաւ: Ասոր համար է որ արդի գաղթականութիւններ մեծ առաւելութիւն մը տւին հիւերուն վրայ: Անոնք իրարմէ և մայր հայրենիքէն այժմեան նման՝ լուրերով իրարու կապուած չլլալնուն, իրարմէ լուր չունենալուն համար է որ զիրար մոռցան, ինքզինքնին ալ մոռցան իրր Հայ:

Օրինակի համար բռնենք Ռումանիոյ հին գաղութը, որ ժամանակ մը ծաղկած ապրեցաւ: Բայց, առանձնացիալ, կղզիացած վիճակի մէջ ապրելով, տալաւ Հայրենիքի գաղափարը ազօացաւ մոռցուեցաւ: Բայց այս վերջերս շէնորհիւ խումբ մը նոր գաղթականներու հասնելուն, և իրենց թէ Հայրենիքէն, թէ քոյր գաղութներէ հասնող լուրերով հայութեան քնացած ոգին արթնցաւ, իբր թէ իր աճիւնէն վերածնաւ ու մենք ճշմարիտ խանդավառութեամբ կ'իմանանք թէ իրենց ժրջան առաջնորդին և ընկերներուն ջանքերով նոր Հայաստան մը կազմելու գործին լծուած են և նոր բեմական կանոնադրութեամբ մը օժտուած Կարօլ թագաւորի կողմէն:

Կիլիկիա ալ ժամանակին այդպէս Հայ բեկորներով ծնաւ և զարգացաւ մինչև որ գրեթէ բուն Մայր Հայաստանի հետ մըցելու կամ անոր տեղը բռնելու յաւակնեցաւ:

Թէև իրաւամբ կ'ողբանք ազգին ցիրուցան վիճակը բայց ողբալէն օգուտ չ'եկեր. խոհեմութիւնը չարիքէն բարիք ծնելուն մէջն է: Այդ է կարեւորը, առ որ նկրտելու են Հայ գաղութներ: Ամէն ազգի մէջ հինէն ի վեր գաղութներ թէ իրենք իրենց օգտակար եղած են և թէ մանաւանդ մայր Հայրենիքի: Վկայ Յոյները, որոնց թէ հին և թէ նոր գաղութներ անգին ծառայութիւններ մատուցին Յոյն Հայրենիքին: Արհեստին ժամանակներէն սկսեալ Փոքր

Ասիան գաղթականական ցանցով պատկով մեծ Յունաստան մը կազմած էին: Նոյնը ըրին վերջէն. Հռովմէն պարտուելէն վերջը, իրենց եւրոպա զրկած գաղութներուն միջոցաւ իրենց Յոյն իտէալներով, մշակոյթով, գրականութեամբ ու լեզուով յաղթեցին Հռովմայեցոց: Մինչև իսկ վերջին ժամանակներս փոքրիկ Յունաստան, կրնանք ըսել թէ մեծ մասամբ իր գաղութներուն կը պարտի իր հսկայ նուաճումները:

Ձեռք յիշեր Գաղղիոյ ինչպէս մանաւանդ Անգղիոյ գաղութներու կատարած մեծ գերը իրենց Մայր Հայրենիքին որը ընդունուած ճշմարտութիւն մըն է:

Տրուած ըլլալով Հայութեան ներկայ պարագաները, Հայ ազգը մտովին կը սիրեմ նմանցնել մարդկային մարմնայ կայմութեան. և կ'երեւակայիմ թէ Երեւանի Հայ հանրապետութիւնը անոր բաբախուն սիրտը կը ներկայացնէ. գործօն, շինարար, ու միշտ եռուզեռ, ըստ միաձայն վկայութեան Հայ թէ օտար ականատեսներու: Ամէն պարագայի տակ աշխարհի ներկայ քաղաքականութիւնը որչափ տեսէ Հայաստանի դիրքն ալ ապահով է, և այլևս հայրենիք չունեցողի երեմիական ողբերը մէկդի ձգելով, այդ հանրապետութեան շրջանին մէջ ապրող մէկ միլիոնէ աւելի մեր եղբայրներուն ինքզինքնին ուզած կերպովնին կառավարելու պետական իրաւունքը ճանչնալու եւ յարգելու ենք, և այնչափ ալ գէշ չեն կառավարեր կոր:

Իսկ Հայութեան միւս երկու մեծ զանգուածները, Սիւրիոյ և Ամերիկայի գաղութները, որոնց իւրաքանչիւրը 100,000է աւելի անդամունի, ես կը կոչեմ Հայութեան երկու թոքերը: Անոնք բախտն ունեցան երկու քաղաքակիրթ

ազգերու հովանաւորութեան շրջանի մէջ դառնալի, ածիլ՝ բարգաւաճելու ամէն պատեհութիւններով: Իրաւ Ամերիկահայը քիչ մ'աւելի բաղդատոր կրնայ համարուիլ՝ աւելի զարգացեալ միջավայրի մը մէջ դառնալուն: Եւ սակայն ապագայի տեսակէտէն Սիւրիոյ Հայութիւնը աւելի բաղդատոր է: Նախ որ Կիլիկիոյ օճախին մօտիկ ըլլալով անոր բուրած հայրենի օդէն, համէն ու հոտէն կրնայ զիւրաւ ներգործուիլ: Բայց մանաւանդ անոր համար որ արաբախօս ոչ-քրիստոնեայ երկրի եւ ժողովուրդի մէջ զտնուելուն բերմամբ աւելի դիւրութիւն ունի իր լեզուն, կրօնը, մշակոյթը, ազգութիւնը պահպանելու: որը չունի Ամերիկայի եւ Եւրոպայի ոչ մի գաղութ: Սիւրիան իր երկիրէն զատ ոչ մի հրապոյր չունի Հայուն համար, ոչ լեզուով, ոչ կրօնքով: Ուստի եւ կըրնայ իբր Կարգանալ, եւ դարերով պահել իր ազգութիւնը, եւ դառնալ ազգային օճախ մը ինչպէս որ էր Երեւանի Թիւրքիոյ Հայութիւնը. և ի հարկին նորանոր անդամներու առաքումներով վառ պահել Եւրոպայի եւ Ամերիկայի գաղութներուն ազգային ոգին եւ լեզուն:

Ահա թէ ինչու համար Սիւրիոյ Հայութիւնը մեր սրտին աւելի մօտիկ է, մանաւանդ Թիւրքահայոց համար, որովհետեւ անոնց ապագան Հայութեան համար ապահով կ'զգանք: Ասոր համար ունէ աններդաշնակ ձայն, չշուկ այդ կողմէն եկած մեզ երկիւղիւ կը վարակէ որ չըլլայ թէ ո'ւնէ անհաճոյ դէպք կամ երեւոյթ գան աղմկել, խառնակել այդ անքոյթ բոյնը զոր Նախախնամութիւնը շնորհեց Կիլիկիոյ Հայութեան: Կը վստահացնեմ Ձեզ որ հրե կը լսենք վէճերու, կռիւներու, մատնութիւններու շուկաներ սրտերնիս դող կ'իլլէ. որ չըլլայ թէ անպատեհ բաներ տեղի ունենան այդ կողմերը: Արգարե Գեղեցիկ

եւ ապահով ապագայ մը ունիք. բայց նաեւ վտանգներով եւ խուժերով պաշարուած էք: Ինչպէս որ Կիլիկիոյ մօտաւորութիւնը Ձեզի համար հաճելի բաղդատութիւն մըն է, նոյնպէս ալ Սիւրիոյ բնիկներուն եւ գրացի թիւրքերուն համար ալ կասկածներու և ամբաստանութիւններու առիթ: Հետեւաբար խիստ զգոյշ ըլլալ պէտք է բնիկ երկրացիին ո'ւնէ կասկածի տեղի չի տալէն զատ, անոնց հետ կատարեալ բարեկամական յարաբերութիւն հաստատելով անոնց համակրութիւնը և յարգանքը գրաւել:

Ասոր համար վերջերս հրատարակուած լուր մը, որուն համեմատ Սիւրիոյ բարձր Քօմիտէին որոշմնագիրը Սիւրիոյ երեսփոխանական 70 անդամներէն 4ը Հայ (ներկայացուցիչներու) կը յատկացնէ, ըստ իս ձախող պարգև մըն է և կրնայ վտանգաւոր հետեւանքներ ունենալ: Շնորհակալ ըլլալով հանդերձ կամովին անկէ առ այժմ հրաժարիլ խելացիութիւն է, պատճառելով որ Հայեր նորիկ են երկրին մէջ և անվարժ, նաեւ շատ ուրիշ զժուարութիւններ ունենալով ձեռնպահ մնալ կ'որոշեն: Արդարեւ ընտրական պայքարին մասնակցիլ, կը նշանակէ կռուիլ, թշնամութիւն, կողմնակցութիւն յարուցանել Սիւրիացոց հակառակութեամբ: Բայց, որ աւելի վտանգաւորն է, Հայոց մէջ 4 թեկնածուներու պայքարը շատ մը վէճեր, կռուակցութիւններ դաշտը պիտի հանէ և ժողովուրդը անհարկի երկպառակէ: Այս և շատ ուրիշ պատճառներով, որոնք ամէն խորհողի համար զիւրահասկնալի են, խոհեմութիւն է Հայոց համար ձեռնպահ մնալ:

Արգարե գործնականի մէջ ալ Սիւրիոյ Հայութիւնը աւելի լաւ կ'ընէ հիթ մեծով փոքրով իր ներքին գործերուն լծուի, կողմակերպելիք, ամրապնդելիք շատ մը պէտքեր ըլլալու են ո-

րոնց համար մարդ, գործիչներ պէտք են. և ատոնք աւելի պէտք են հայութեան համար քան թէ Սուրբոյ համար:

Անցեալ մի քանի տարիներու կարճ շրջանի մէջ Հայութեան կատարած գործը այդ երկրամասին մէջ խիստ քաջալերական է: Նոր Աւետարեի էջերը ինչ որ աւրախառն լուրերով մեզ համոզելու թէ այդ գաղութը կը քալէ. քառասուն մը զլուսը վեր կը վերցնէ. համայնք մը կը դառնայ, ազգային կեանք երեւան կ'ելլէ, իր վեհ, աւելարդ կաթողիկոսով և անոր օգնականներով ու նորահաստատ կաթողիկոսական կեդրոնով և դպրեմանքով: Եկեղեցիներ, դպրոցներ կը բուսնին ամէն կողմ: Տրուած լուրերէն քաղելով կը տեսնենք ուրախութեամբ որ անցեալի դառն փորձութիւններն ու աղէտները, ժողովուրդը ոչ թէ թմրեցուցած, կրօնքէ աւելեցեղի պաղեցուցած՝ այլ աւելի մօտեցուցած են: Կրօնական վեհեր դադարած են և եկեղեցիներ իրարու հետ սիրով յարգանքով կ'ապրին իբր երեք քոյրեր:

Կը սիրենք յուսալ որ մօտ ապագայի մէջ Սիւրիական մեծ քաղաքներու մէջ՝ որպիսիք են Պէյրութ, Հալէպ, Դամասկոս՝ Հայութիւնը եռուզհոռ, գործօն վիճակ մը ստանայ ինչպէս էին Թիւրքիոյ Հայաշատ քաղաքներ. որ հոն ալ զգացուի թէ Հայութիւնը կ'ապրի, իր հոգեւոր, մտաւոր առողջ կեանքը: Կը սիրեմ յուսալ և տեսնել անոնց մէջ ալ ազգին յատկանիշն եղող ընկերական, գրական, կրօնական շարժումներ ինչպէս տեսայ Ամերիկայի Հայոց մէջ, որ ամէն օր, գոնէ ամէն շաբաթ հաւաքոյթներ, խնճօքներ, ասեմախօսութիւններ, տօնակատարութիւններ, անպակաս առիթներով հանդէսներ կը սարքուին ու ժողովուրդը հեծի հեծ խուռներամ կը վազէ մինչեւ իսկ եթէ հան-

գանակութեան տարածայնութիւններ ալ ըլլան: Ուր որ ալ են իրենց եկեղեցիներուն շուրջը խմբուած իրենց ներկայութիւնը զգալի կ'ընեն: Այդ է որ կը սիրեմ յուսալ և կ'ապահով լսել Սիւրիոյ Հայոց համար, մանաւանդ որ 100 000 հայ ժողովուրդ մը դիւրաւ կրնայուէ տիրանալ այդ դիրքին փոքրիկ Սիւրիոյ մէջ՝ ինչ որ կրցած է ընել Ամերիկահայութիւնը Ամերիկայի պէս լայնածաւալ և բազմամիլիոն երկրի մը մէջ:

Կ. ԹՈՒՄԱՆՍՆ

Յ. Գ.

Կը վախճամ թէ պէտք եղածին չափ չի շեշտեցի ընդ Սիւրիացիներու հետ սիրալիր յարաբերութիւն մշակելու աւագ կարեւորութիւնը: Ամէն առիթէ օգտուելու է, մանաւանդ առիթն իր ստեղծելու է, անոնց պատասխանատու մարմիններու, կազմակերպութիւններու հետ բարեկամական շփումներ ունենալու: Թիւրքիոյ մէջ գործած սխալներն իսկ Սիւրիոյ մէջ ալ կրկնելու չէ, ինչպէս որ հին ժամանակներէ ի վեր ժահմետական Արաբը և Թիւրքը իբրեւ սրբապղծութիւն նկատուելով ամէն ջանք ի գործ կը դրուէր անոնց հպումէն զգուշանալու և բոլորովին կղզիացեալ կեանք մը կապրէինք. ոչ անոնց ընտանիքներուն, ընկերական հաւաքոյթներուն կ'այցելինք, ոչ ալ անոնց մեզայցելելը հաշտ աչքով կը դիտէինք. զիրար չէինք ճանչնար և իրարմէ միշտ կը կասկածէինք, նոյնը կրկնելու չէ ի Սիւրիա: Անհատներէն աւելի պաշտօնական մարմիններ միշտ անկեղծօրէն անոնց պաշտօնական մարմիններու հետ շփման մէջ մնալու են, ժողովներուն, հաւաքոյթներուն, հանդէսներու գանձք հրաւիրելով և անոնց հանդէսներուն մենք ներկայ գտնուելով և մասնակցելով. և եթէ կրնանք բան մը ընել անոնց հանդէսները և այլն աւելի կ'անոնաւոր ու յաջող հանդիսաց-

Ն Ե Ր Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Դ

Երախսագէտ ursով միւս,
 Բաժինս ըլլայ խինդ կամ վիւս—
 Կ'ուզեմ, Տէ՛ր իմ, Քեզ պաշտել,
 Քեզ համար, կանգնել Բեթէլ՝
 Որ եւ է սուրբ տեղոյ մէջ
 Սիրով անկեղծ, սուրբ, անւէջ. . . :
 Վերացումով լուռ, վրսեմ,
 Ըզֆէ՛զ, իմ Տէ՛րս, կը գտնեմ
 Ամբոխին մէջ մեծածխոս
 Կամ լրուութեանը մէջ խոր. . .
 Տանախին մէջ, առանձին՝
 Ուր զըւարթունք կը յաժին,
 Կամ խորանի մը առջեւ՝
 Երբ նեմարեմ լուսաբել,
 Գեղեցկութիւնն ոսկեթել՝
 Հոն ծնւադիր աղօթել
 Կուզեմ ursանց, Տէ՛ր, Քեզի՛,
 Արարի՛չդ իմ սիրելի. . . :

Նիւ Եոթ

Ա. Կ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

նկու՝ օգնենք անոնց, սիրելի և բազմալի դարձնելու հայոց ներկայութիւնը իրենց մէջ :

Այլևս մոռնալու ենք մենք զմեզ ուրիշ արևելեան ազգերէ տարբեր և բարձրը նկատելու յաւակնութիւնը և կզգիացեալ դիրքը, ինչպէս թիւրքը նոյնպէս Արարի և Սիւրիացիին ևս փոխուած են : Անոնք ալ հին յաւակնութիւններ և նախապաշարումներ ձգած են և կըրնայ անոնց հետ նոյն դիտման վրայ ընկերական, բարեկամական յարաբերութիւն մշակուիլ : Այս կերպով աւելի արդիւնաւորապէս պաշտպանուած կ'ըլլան Հայոց իրաւունքները, քան թէ Երեսփոխանական Ժողովի մէջ մի քանի Հայ անդամներ ունենալով :

Բնականաբար աւելի դիւրին ըլլալու

է Քրիստոնեայ Սիւրիացիներուն հետ մտերմօրէն յարաբերուիլը : Ձեռ գիտեր ստուգապէս թէ Սիւրիացի Քրիստոնեաներուն ճիշդ թիւը ի՞նչ է եւ Ասորական եկեղեցւոյ ո՞ր ճիւղին կը պատկանին : Բայց ո՞ր ճիւղին ալ վերաբերին, յամենայն դէպս՝ մանաւանդ մեր Ազգ : Եկեղեցւոյ պաշտօնէութիւնը՝ ամէն դիւրութիւն և պարտաւորութիւն ունի իբրեւ քոյր եկեղեցի անոնց հետ շարունակական յարաբերութիւն մշակելու : Տեղական պարագաները չեն գիտեր, բայց դժուար չէ գուշակիլ թէ Քրիստոնեայ բնիկներու օէրը և համակրութիւնը իբրեւ միջնորդ պիտի ծառայէ Մահմետական Սիւրիացիներուն քով, Հայութիւնը վստահելի եւ բաղձալի տարր մը ներկայացնելով :

ՎԵՐ. Լ. Օ. ԼԻ

ՎԵՐ. Լ. ԼԻ Կիլիկիոյ մէջ Ամերիկեան Պաշտօնէն աչքառու միսիոնարներէն մէկն էր, որ 30 տարի ազդու գործունէութեամբ աշխատեցաւ։ Այս կարեւոր և շատ օգտակար անձնաւորութիւնը ճանչնալու բաւական պատեհութիւն տեսցած եմ։ Իբր ուսանող՝ Մարաշի Ակադեմիայի, Մանչեսթըր Բարձրագոյն վարժարանին, յաճախած երկու տարիներու ընթացքին։ Իր ընտանիքին մէջ գործ ունեցայ։ Յետոյ երեք տարի Աստուածաբանական Ճեմարանի մէջ իրեն աշակերտեցայ, միևնոյն ատեն իբր իր գրագիրը՝ եկեղեցիներուն ղրկուելիք նամակները կը գրէի և բեմերէն խօսուած քարոզները և բանաստեղծութիւնները կը թարգմանէի։ Եւ ուրիշ ընկերներուս հետ՝ մօտ 15 տարիներ՝ մէկէ աւելի կրթական և աւետարանչական ժողովներու մէջ աշխատեցանք։ Իր գտնուած բոլոր ժողովներուն առանց բացառութեան ինքը կը նախագահէր։

Այս մեծ մարդուն կեանքին և նկարագրին մի քանի գիծերը.—

Կանոնաւոր աշխատութիւն։ Աստուան ժամը վեցէն մինչեւ գիշերուան ժամը տասը ժամանակը այնպէս բաժնած էր որ կարդալու, գրելու, դասի երթալու, հանգչելու և մարմնամարզ ընելու, տեսչութիւնը ստանձնած դպրոցը այցելելու, ժողովներու ներկայ ըլլալու և ուրիշ այլևայլ պարտականութիւններ կատարելու բաւական ատեն կը գտնէր։ Միտքը գրած ոչ մէկ գործը չէր յետաձգեր։

Անդուր կարդացող մըն էր։ Անձնական ճոխ և բազմահատոր գրադարան մ'ունէր։ Աստուածաբանական Ճեմարանի գրատան մէջ ալ բազմատեսակ 6-7000 ընտիր հատորներ կային։ Ասոնց մեծ մասին պարունակութեան տեղեակ էր։

Իրեն եղած հարցումներուն մի քանի նախադասութիւններով պատասխանելով հանդերձ, այն հարցին շուրջ գրուած մէկէ աւելի գիրքեր և յօդուածներ կ'ուտար, որոնց ամէնքն ալ ինք արդէն աչքէ անցուցեր էր։ Կը կարդար՝ տունը, ճամբորդութեան պահուն, ձիուն վրայ, վրանին տակ, ամէն տեղ և ամէն ժամանակ։

Յստակ միտք։ Ամէնէն բթամիտն ալ կը հասկնար զայն։ Ամէնէն խրթին նիւթերը յստակ կ'ըլլային։ Բեմերէ կարգացած բանաստեղծութիւնները լսելու համար ունկնդիրներ եկեղեցին ծայրէ ծայր կը լեցնէին։ Ըսելիքները այնչափ գիւրդմբռնելի և ժողովրդային օրինակներով և ոճով կ'ըսէր որ զանոնք չհասկնալ կամ տարբեր հասկնալ անկարելի կ'ըլլար։ Ամէն Կիրակի առաւօտ Կրթականօրեայ դասէն ետքը դասին վրայ տուած բացատրութիւնները անմոռանալի էին։

Անճամաւ ճշդապահութիւն։ Ծիշդրոպէին դասարանին մէջ, դպրոցին տեսչութեան վայրը, սեղանին առջևը, ծրագրած գործերուն պլանը կը գտնուէր։ Գրելիք նամակները ժամանակին կը գրէր, խոստումները ճիշտ ժամանակին կը կատարէր։ Առհասարակ այնպէս հասկցուած էր թէ երբ Տր. Լի բանի մը համար «կը յուսամ» ըսէր այն կատարուածի կը հաւաստի։ Իր այս յատկութիւնը իրեն հետ գործ ունեցող աշակերտներուն, ժողովականներուն, ուսուցիչներուն, վաճառականներուն, ըսեմ, նաեւ ջորիպաններուն հաղորդած էր։ Ըշդապահութեան մէջ թիրացած ոչ մէկ անհատ անոր մօտ ըլլալու կը համարձակէր՝ առանց երեսը կարմրելու։ Օր մը եկեղեցւոյ բեմէն ճշդապահութեան նիւթին վրայ ճառ մը կարդացած ատեն սա պատմութիւնը ըսաւ։ «Ամե-

րիկայի մէջ Տր. Տիմա անուն նշանաւոր բանախօս մը կար: Անգամ մը զինք մը տիկ ընելու հկած մի քանի հազար անձեր ժողովասրահը լեցուցած էին. որոշեալ ժամը գրեթէ հասեր էր: Բայց բանախօսը չերեւցաւ, ժողովուրդը սկսաւ անհամբեր գէպի գոռը նայիլ: Նախագահը ռաքի ելաւ և ըսաւ. «Բարեկամներ մի՛ վրդովիք, որոշեալ ժամանակին դեռ երկու րոպէ ունինք, այս երկու րոպէն չանցած կամ Տր. Տիմա անձամբ կուգայ կամ անոր մահուան լուրը:» Դեռ իր խօսքը չէր լմնացուցած Տր. Տիմա ներս մտաւ բուռն ծափահարութեանց մէջ, Երբ Տր. Լի այս պատմութիւնը կ'ընէր ունկնդիրները իրարու կ'ըսէին. «Ասորքը ճիշտ իրեն կը նմանի եղեր:»

Տր. Լի բարձր նկարագիր մ'ունէր: Այդ նկարագրին զարդերէն մէկն էր պարզութիւնը: Խօսքն ու խորհուրդը ինչպէս օրէին, նոյնպէս էր նաև կեանքը: Կեղծ, երկդիմի, շարլաթան եղողներուն և զինքը գովողներուն երբեք երես չէր տար: Ուրիշ մէկ զարդն էր ուղղանկիւսութիւնը: Սխալ բաները երբեք չէր սիրեր: Հաշիւները, սիրտը և շարժառիթները մաքուր էին: Յետին մտքով բնաւ չէր խօսեր: Երկու մտօք առնուող բառերէն կ'զգուշանար: Չէ լսուած թէ անձնական շահու համար, նախանձէ և ստեղծութենէ զրգուած, գժուծ և արհաւմարհելի նպատակով ուէ մէկը իրմէ փաստուած ըլլայ: Մէկ երբորդն էր արդարաւիրութիւնը: Սիրոյ օրէնքին մասին գովեստով կը խօսէր, սակայն՝ արդարութիւնը անկէ վար չէր դասեր: Ամէն մարդու հանդէպ անաչառ էր: Աստուծոյ գործին անօգուտ և փաստակար բաներուն չէր հանդուրժեր: Անվստահի մարդիկ իրեն հետ գործ չունէին:

Տր. Լի կրօնական և հոգևոր ճշմարտութեանց բուն հաւատացող մ'էր: Իր քըրիստոնէական փորձառութեան մասին

չատ չէր խօսեր: Սակայն անոր ազօթքներէն և քարոզներէն յայտնի էր թէ նա կշռուած, հաստատ հիման վրայ գրուած, կասկածներու հովերէն ազատ հաւատք մ'ունէր: Ուրիշներու իր ուսուցած աստուածաբանական գաղափարները մարսուած և կեանքի վերածուած էին: Աստուծոյ բարութեան վրայ կատարեալ վստահութիւն ունէր: Երբ իր երկրորդ կենակիցը ի Տէր նընջեցաւ, ինքը մարմնական կազդուրումի համար ճամբորդութիւն կ'ընէր: Բնականաբար յուզարկաւորութիւնը յետաձգուեցաւ մինչև իր գալը: Յուզարկաւորութեան վաղորդային եկեղեցիի հոգաբարձութեան հետ իրեն ցաւակցութիւն յայտնելու գացած էինք: Մեր ընկերներէն մէկը որ շուտ և շատ խօսելու սովորութիւնն ունէր, սկսաւ ննջեցեալին բարեմասնութիւնները թել և կորուստին անդամանելիութիւնէն ճառել: Իսկ Տր. Լի անոր խօսքը ընդմիջելով ըսաւ. «Պէտք է մենք Աստուծոյ նախախնամութեան հաւատանք: Միտիս Լի Անոր հրամանովը մեզմէ բաժնուեցաւ, մենք՝ որ հոս ենք՝ քանի պատեհութիւն ունինք մեր գործերովը զբաղելու ենք:» Ինչպէս որ կ'ըսէր այնպէս ալ կ'ընէր: Թաղումէն վերադարձին անմիջապէս իր առօրեայ գործերով զբաղելու սկսած էր:

Կ. Յ. Յարութիւնեան

ՍԻԿԻԼԻՍՅԻ ԱԽԱՋԱԿԸ

Աշնան պայծառ օրուան մը իրիկնամուտն էր: Սիկիլիոյ կեդրոնը եղող ընդարձակ գաշտի մը մէջէն նեղ և ճերմակ ճամբայ մը կ'երկննար գէպի մարը մըտնող արևին ուղղութեամբ:

Այս ճամբայէն ճամբորդ մը կը քալէր միայնակ և պայուսակ մը կը կրէր: Նա շատ յոգնած էր քանի որ տասը մը ղոն անդին եղող քաղաքի մը մէջ զոր-

ծած էր: Տակաւին քանի մը մղոն ևս ունէր քալելիք և գիտէր թէ հոն հասնելէ առաջ մուտք պիտի կոխէր:

Ձիաւոր մը արշաւելով հասաւ այս ճամբորդին ետեւէն: Հեծեալը երկայնահասակ և մթազոյն մարդ մըն էր, հարկու աչքերով, գէպի վեր ոլորուած պիսիքով և սև մօրուքով: Թաղիքէ լայն գլխարկ մը հագած էր, խթաններով երկայն կօշիկներ ունէր և մեծ սև վերարկուի մը մէջ պլլուած էր: Երբ ան ճամբորդին քով հասաւ ձին սանձեց և կեցաւ:

— Բարի իրիկուն, տէր,» ըսաւ հետիոտն մարդը:

Ձիաւորը չպատասխանեց: Յատքեց գետինը և մօտենալով ճամբորդին երեսը նայեցաւ, ու հարցուց. «Ի՞նչ գործով կ'ղրադիրս: Պայուսակիդ մէջ ի՞նչ ունիս?»

— Գիրքեր, տէ՛ր իմ:

— Ահ, վերջապէս բռնեցի քեզ: Դո՛ւն ես այն մարդը որ հոս հոն կ'երթաս այս ժանտաբեր գիրքերը կը ծախես, որոնք պարզամիտ ժողովրդին բարոյականը կ'ապականեն: Նայէ՛, նախ քու այդ գիրքերդ պիտի այրեմ և յետոյ քեզ հրաքանազարկ պիտի ընեմ:»

Այսպէս ըսելով վերարկուն բացաւ ուր կը տեսնուէր զոյգ մը ափրճանակներ գօտիին մէջ խրած:

— Պայուսակը հո՞ս գիր և գնա քիչ մը ճիւղեր հաւաքէ՛ կրակ մը վառելու համար: Փախչիլ մի՛ փորձեր, եթէ ոչ հիմակ իսկ հրացանի կը բռնեմ քեզ:

Ատրճանակներէն մին քաշեց և շարժիկ գրածախին երեսն ի վեր շարժեց:

Դրածախը գիտցաւ թէ Սիկիլիոյ մէջ գտնուող քաղմաթիւ աւազակներէն մէկուն ձեռքն ինկած էր: Խորհեցաւ թէ ամենալաւն էր լռել: Գնաց և շատ չանցած ետ եկաւ խուրձ մը ճիւղեր հետը բերելով:

Մինչեւ որ կրակը վառեցաւ զիշերն

ալ վրայ հասաւ: Յետոյ գրածախը խօսեցաւ. «Տէ՛ր, բան մը ըսեմ քեզի գիրքերը այրելէդ և զիս հրացանազարկ ընելէդ առաջ: Թոյլ տուր որ այս գիրքերէն քեզի մէկ երկու հատուած կարդամ:»

— Այո՛, ըսաւ աւազակը, այդ բանը լաւ է, նստէ՛:

Աւազակը կրակին մէկ կողմը նստած էր ատրճանակը ձեռքը բռնած: Գրածախը գիմացը տեղ գրաւեց և Ղուկասու Աւետարան մ'ընտրեց և սկսաւ կարդալ:

«Մարդ մը երուսաղեմէ երիքով կ'իջնէր ու աւազակներու ձեռք ինկաւ...»

Աւազակը անհանգստութիւն ցոյց չէր տար: Ան մտիկ կ'ընէր: Իտալական լեզուն ծայր աստիճան ներդաշնակ է և Բարի Սամարացիին առակը շատ անուշ կը հնչէր այդ իրիկուան լռութեան մէջ՝ աստղերուն տակ:

— Այդ պատմութեամբ սիրեցի, ըսաւ աւազակը, այդ գիրքը այրելու չենք, Հոս վար գիր գայն:

Յետոյ գրածախը Մատթէոս Աւետարանը վերցուց և հինգերորդ գլուխը բանալով սկսաւ կարդալ. «Լսած էք որ ըսուեցաւ առաջիններուն, պապնութիւն մի՛ ըներ...» Ծարունակեց կարդալ մինչեւ որ աւազակը միջամտեց, «Այդ ալ լաւ է: Ամէն պարագայի տակ այդ գիրքին մէջն ալ գէշ ոչինչ կայ: Ուրիշ մը կարգաւ»

Դրածախը յետոյ, Նոր Կտակարան մը վերցուց և կարդաց Պողոսի առ Կորնթացիս գրած թուղթին տասն և երրորդ գլուխը՝ քրիստոնէական սիրոյ այն մեծ երգը: Աւազակը հիացումով բացագանչեց. «Ի՛նչ գեղեցկութիւն, ի՛նչ հրամարտութիւն... սէրը քաղցր է, սէրը չի նախանձիր, չարութիւն չի խօրհիր... լաւ և շատ լաւ են: Անտա-

րել: Ատ ալ հոս դիր և ուրիշ մը կարդա:»

Գրածախը շարունակեց կարդալ գիրք գրքի ետեւէ և, աւագակն ալ շարունակեց ըսել՝ «Այդ գիրքն ալ պիտի չ'այրենք»: Վերջապէս գրածախը ըսաւ, «լմեցաւ»:

Աւագակը կտրուկ կերպով ըսաւ. «Պարապ բան, գէշ գիրքն'ըր դուրս հանէ: Ես կ'ուզեմ տեսնել այն բաները որոնք գիւղացիներուն կը ծախէիր, գիրքերը որոնք անոնց բարոյականը կ'ապակահեն»:

— Բայց Տէ'ր, ուրիշ չ'ունիմ:

— Բարեկամս, ըսաւ աւագակը, ինծի սուտ մի՛ խօսիր այդ վտանգաւոր է քեզի:

Ան ելաւ և գրածախին պայուսակը խուզարկեց: Պարապ էր: Փերեզակին վրան և գրպանները խուզարկեց և գիրքեր չգտաւ:

Յետոյ խնդաց:

— Պապօ՛, ըսաւ, կրնաս երթալ սակայն միտքդ պահէ՛, եթէ երբեք տեսնեմ որ գէշ գիրքեր կը ծախես, քեզ շան մը պէս հրացանի կը բռնեմ:»

Ձին կանչեց, հեծաւ և անհետացաւ: Իսկ գրածախը ճամբան շարունակեց: Գիւղը հասնելով պանդոկ մը իջեալնեցաւ: Յաջորդ առաւօտ նախաճաշէն յետոյ պայուսակը առնելով շուկայի հրապարակը գնաց: Հանդարտօրէն քալեց դէպի խումբ մը մարդիկ որոնք ծախուելիք աւանակ մը շրջապատած էին:

— Բարի լոյս ձեզ, պարոններ, ըսաւ նա, թոյլ՝ տուէք ինձ որ ձեզի մեր Տէր Յիսուս Քրիստոսի վրայով կարգամ:

— Ամենայն հաճութեամբ, պատասխան տուին մարդիկը և աւանակը ձեռքելով եկան:

Գրածախը կարգաց իրենց թէ ինչպէս Յիսուս իր երկու աշակերտները զրկեց աւանակ մը բերելու և թէ ինչպէս անոր վրայ հեծաւ Երսւստղէմ գալու համար:

Պատմուածքը հետաքրքրեց զանոնք և անոնցմէ մին գիրքին գինը հարցուց:

— Կէս դահեկան միայն, ըսաւ գրածախը:

— Աժան է, ես հատ մը պիտի գնեմ:

Բայց մարդը իր գրածը գրպանէն հանելու չմնաց, երբ ձայն մը պռուաց: «Ձգո՛յ՜ բարեկամներ, այս մարդը ըստահակ մըն է և իր գիրքերը կարդալու յարմար բաներ չեն»:

Յետոյ խառնաշփոթութիւն մը ծայր տուաւ:

Ժողովուրդէն մի քանին գրածախին կողմը բռնեցին, բայց մեծ մասը իրեն դէմ էր: «Ձարկէ՛ք հերետիկոսը» կ'աղաղակէին, «Մահ հայհոյիչին, քարկոծեցէ՛ք զինքը»:

Բանը գէշ երեւոյթ առաւ:

Ճիշդ նոյն պահուն ձիաւոր մը վրայ հասաւ քառասմբակ: Կտրեց անցաւ շուկայի հրապարակը և ամբոխին մէջէն ճամբայ բացաւ: Երկայնահասակ, մըթագոյն մարդ մըն էր՝ դէպի վեր ուղորուած պիտերով և սև մօրուքով մը: Մեծ վերարկու մը հագած էր և խթաններով երկայն կօշիկներ ունէր: Գիւղին մէջ ամէնքը զինքը կը ճանչնային և շատեր կը վախնային իրմէ:

— Կեցէ՛ք, պռուաց նա, թող տուէք այդ մարդը:

— Բայց Տէ'ր իմ, այս մարդը կ'աշխատի մեզի գէշ գիրքեր ծախել և պէտք է քարկոծուի:

Աւագակը ձիուն վրայ նստած ամբոխին մէջտեղն էր և անոնց կը խօսէր: Պատմեց անոնց ինչ որ նախորդ գիշեր պատահած էր: Ըսաւ. «Գիրքերը լաւ են, թո՛ղ տուէք զինքը որ երթայ և ով որ անոր փնաս մը հասցնէ ինծի հետ գործ պիտի ունենայ»:

Տարիներ վերջ գրածախը զարմանքի եկաւ երբ Ամբրիկայէն նամակ մ'ըտացաւ, ուր գրուած էր. «Իմ սիրելի բարեկամս, դուն կը յիշե՞ս այն աւա-

ՄԱՐՄԻՆԴ

Եթէ ՊԵՏԲ ԵՂԱՆԾ ԾԱՆՐՈՒԹԻՒՆԸ
ԶՈՒՆԻ

Դժուարութիւնդ աւելցնելու համար
սա հինգ կէտերուն աւելցրուած թիւն ըրէ .
մարմնական քննութիւն , հանգիստ , ու-
րոշ մարզանքներ , կանոնաւոր առող-
ջապահական սովորութիւններ և մաս-
նաւոր կերակուր :

Սնունդի մասին քիչաքիչ խոսենք .

Կար , խմէ օրը երեք քաւած :

Հացահատիկ . Զուտ ցորենէ և թուխ
հաց լաւ գոյն է :

Պտուղներ . Ամէն օր եփած կամ թարմ
պտուղ մը կեր : Զոր պտուղները - չա-
միչ , արմաւ , թուզ , սալոր - առատօրէն
կեր : Ամէն օր նարինջ մը կամ խաղող
կեր :

Բանջարեղէն . Ամէն օր երկու թարմ
բանջարեղէն կեր , մէկը անպատճառ
հում , զոր օրինակ հազար , կաղամբ կամ
լոլիկ . շաքար չաւելուած չորս անգամ
կանանչ տերեւով բանջարեղէն կեր :

Փայքաթէ (կեղեւով խաշած) կամ բրին-
ձէ , մաքարոնէ պատրաստուած կերա-
կուրներ :

Ողողն (կամ սիսեռ) Լորիա և կաթէ
կամ պանիրէ շինուած կերակուրներ :

Հաւկիթ առնուած օրը մէկ հատ ,
խաշած հաւկիթը աւելի կրնայ գործած-
ուիլ :

Կարագ չատ գործածէ ինչպէս նաեւ

զակը որ գիշեր մը քիչ ճամբուն մէջ
կեցուց : Ես նոյնն եմ , բայց այլեւս ոչ
աւազակ : Ոչ քիչ և ոչ ալ քու ինծի
կարգացած խօսքերը մոռցած եմ : Ա-
նոնք զիս գէշ կեանքէ մը ազատեցին ,
փառք Աստուծոյ :

Թրգմ. Յ. Մ. ԱՊԱՃԵԱՆ

Պէյրուս

խօսքի չորցած միս և իւղեր :

Շաքար . Պտուղները առատ չաքար
կը պարունակեն . թուխ չաքարը ճեր-
մակ չաքարէն աւելի լաւ է : Հաւա-
գոյնն է երբեք չաքարեղէն չգործածել :
Եթէ գործածել ուզուի , կերակուրէն
անմիջապէս ետքը միայն իբր աղանդեր
պէտք է ուտել : Իբր աղանդեր խմո-
րեղէն գործածել աւելի լաւ է :

Կանոնաւոր ճաշերու պահերուն մի-
ջեւ , կէսօրէ առաջ եւ կէսօրէ ետք ,
ճաշէ՝ եթէ ճաշի ատենուան համար ա-
խորժակդ չի խափաներ :

Հանգիստը շատ կարեւոր է : Հանգիս-
տի պահդ հանգիստի համար գործածէ .
քունի պահիդ աւելցրուած թիւն ըրէ . կա-
նոնաւոր անկողին գնա : Շաքարու վեր-
ջերը հանգիստ ըրէ ,

ՉԱՆԻՑԻ ԷՁԸ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ *

Երբ շնորհքի գահին շուրջ մեր հո-
գինները կը հաւաքուին՝ կատարելու հա-
մար մեր նուիրական պարտականու-
թիւնը հանգէպ Բեզի ,

Ո՛վ Հայր մեր

Քեզի վայելէ փառք և պատիւ ,
քանզի Դուն ես Բարին Աստուած ,

Որ երկիցն ես ,

Դուն՝ Բու իմաստութեամբք տի-
գերքը ստեղծելով կարգաւորեցիր , ու-
րեմն յաւիտեանս

Բու անունդ սուրբ ըլլայ :

Երբեք թող մի՛ տար որ անտարբե-
րութիւնը և կամ յապաղումը բաժնէ

* Վերոգրեալը գտնուած է , Ընդհանուր
Պատերազմին , ճակատամարտի մը դաշտին
վրայ , եւ կ'ենթադրուի թէ ան շաքարուած
է վերաւոր զինուորի մը կողմէ : Ծ. Թրգմ.

մեզ Քու փառաւորեալ երեսէդ, բայց տուր որ

Քու քաղաւորութիւնդ գայ:

Թող Քու պատուիրաններդ կատարուին ամէնեւրեք, և Քու բարի յօժարութիւնդ ու

Քու կամեղ ըլլայ,

Տէր շնորհէ որ մեր հնազանդելու պատրաստականութիւնը «օրդիական ըմբռնումով» գործադրուի

Ինչպէս երկինքը նոյնպէս երկրի վրայ:

Ո՛վ Տէր, կ'աղօթենք նաև մեր հոգիներուն համար որպէսզի դուն հաճիս

Օրհ օր մեզի տալու

Կեանքի սնունդը, որով մեր հոգիները կը սնանին, ու բաւարար հագուստ և

Մեր ամեն օրուան հացը:

Մեր զանազան կարիքներուն դուն ձեռնտու եղիր, և Քու ողորմութեամբդ խղճա՛

Եւ մեզի ներե

Մեր բոլոր սխալները, քանզի դուն սիրայօժար պատարագեցիր Միածինը որպէսզի ներուին

Մեր պարտքերը,

Քանզի ո՛վ Տէր, մենք կը հաւատանք՝ թէ Դուն մեզի պիտի ներես

Ինչպէս մեք ալ կը ներենք

Տէ՛ր, Քու յայտնած սէրդ, տուր որ մեզի սորվեցնէ՝ ուր և ինչ զիճակի մէջ ալ զտնուինք ներելու բոլոր

Մեր պարտապաններուն,

Եթէ երբեք Քեզի հանդէպ սիրոյ պարտականութեան մէջ թերանանք նոյն ատեն օգնէ,

Եւ մեզ մի տանի

Չըլլայ որ մենք հոգեւոր և մարմնաւոր կարիքներու համար յուսահատինք, եւ ոչ ալ աշխարհի հրապոյրը մզէ մեզ

Փորձութեան,

Թող մի՛ տար որ ուէ ճշմարիտ հաւատայեալի հոգին կորսուի փորձութեան ժամանակ

Հապա ազաւսէ՛

Եւ փրկէ՛ զինք Սատանայի նենգութենէն, կենաց ու մահուան մէջն ալ, Տէ՛ր, պահէ

մեզ չարեան

Եւ այսպէս Քեզի կ'աղօթենք, Տէր, որ ամէն բանի աղբււրն ես,

Քանզի քուկդ է քաղաւորութիւնը, Դուն աշխարհի արարիչն ես, անոր հրաշալի պատմութիւնը Քեզի կը վերաբերի ինչպէս նաև

գորութիւնն ու փառքը.

Քու բոլոր սքանչելի գործերդ երբեք պիտի չվերջանան, այլ պիտի մնան անսպառ

յաւիտեանս

Եւ այսպէս մենք տկար արարածներս կրկին խոստովանելով, կ'աղօթենք, և փառք եւ պատիւ ու զօրեւթիւն ի բարձունս Հօր եւ Որդւոյ Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ յաւիտեանս յաւիտեանց: Ամեն:

Հոկտ. 26, 931 թրգւ. Կ. Ս. ՖԱՐԱՃԵՍՆ Սեղանիկ

ՍԵԼԱՆԻԿԻ մանուկ Ե. Ք. Զ. Ընկերութիւնը ժողովրդային չքեղ հանդէսով մը Մարտ 6ին տօնեց Ե. Ք. Զանից Ընկերակցութեան յօբելանսը:

Հանդէսին բացման խօսքը ըրաւ Տիար Պ. Մորճիկեան, որ կը զօրէ՛ր յայտագիրը: Զանիցի երկսեռ անդամներուն կողմէ հզան տաւր պատշաճ արտասանութիւններ, զուգերկ և նուագ:

Համայնքէս երաժշտագէտ Տիար Ժ. Զանկրեանի և Տիկ. Տոքթ. Մ. Պապիկեանի բարեյօժար ժշտկցութիւնը հանդէսին փայլը աւելցուց:

Ե. Ք. Զանից ընկերակցութեան յիսնամեայ բեղուն գործունէութեան ամփօք մէկ վերլուծումը ըրաւ Պատ. Կ. Ս. Ֆարաճեան:

Երիտասարդները հետաքրքրող խնդիրներէն իւրերէն շուրջ պատկերաց

լից և օգտաշատ բանախօսութիւններ
ըրին Օր. Ա. Եռահանսըն և Տիար Կ. Ա-
լոճեան:

Քառաձայն երկչախօսմբը մէջ ընդ
մէջ երգեց օրուան յատուկ հոգեշունչ
երգեր:

Նախագահի իմաստալից հասկերան-
քէն ետքը հանդէսը փակուեցաւ Զանի-
ցի ընդհանուր քայլերգով:

Եկեղեցիին սրահը հին և նոր երկսեռ
երիտասարդներէ բաղկացեալ անա-
խընթաց խումբերամ ունկնդիրներով
լեցուած էր, որոնք վայելեցին հոգեկան
խրախճանք մը և մեկնեցան անուշ տը-
պաւորութեամբ:

Մարտ 17, Սեղանիկ

ՋԱՆԱՍԷՐ ՄԸ

ՀԱՅ ԿԵԱՆՔ

Պէթրոսի Տիար Ե. Ա. Աղէկեան կը
դրէ թէ քէմիի Հայ Աւետ. եկեղեցին
Մեծ Պահքի տաթիւ, երեք շաբաթէ ի
վեր չորս տարբեր տեղեր ամէն օր աղօ-
թաժողովներ կը սարքէ առաջնոր-
դութեամբ Վեր. Հ. Րիկզի, Վեր. Հա-
տիտեանի, Վեր. Հասէսեանի և Պատ.
Յ. Արգարեանի: Մեծ բազմութիւններ
կը մասնակցին ժողովներուն և շատեր
կ'ապաշխարեն: Նոյն եկեղեցիի երի-
տասարդուհիները և երիտասարդները
զատ զատ արթնութեան ժողովներուն
ցած են: Երիտասարդներու մէկ ժո-
ղովին մէջ Վեր. Հատիտեան խօսած է
նիւթ ունենալով Դանիէլի կեանքը, և
երիտասարդ մը իրական երջանկու-
թեան Բրիտոսի մէջ ըլլալուն մասին
իր ազդու վկայութիւնը տուած է:

Ա. Հայ Աւետ. եկեղեցին ևս տարբեր
շրջաններու մէջ աղօթաժողովներ ունե-
ցած է, որոնց մասնակցած են նաև շատ
մը երիտասարդներ: Լրատուն գնա-
հատանքով կը յիշէ Վեր. Ե. Կէօքէօզ-
եանի այս ազդուութեամբ թափած ջան-
քերը:

Անթիլեւոսի մէջ Մարտ 8-14 ին տե-
ղի ունեցած եպիսկոպոսական ժողովի
մասին հետեւեալ կը քաղենք Կաթողի-
կոսարանի ՀԱՍԿ պաշտօնաթերթէն:

Ժողովին մասնակցած են բացի Կիպ-
րոսի առաջնորդէն Սուրիոյ և Լիբանանի
չորս թեմակալ եպիսկոպոսները, Շահէ
Եպիս. Գաւապրեան և Փառէն Ծ. Վրդ.
Մելքոնեան: Վեր. Սահակ Կաթողիկոս
ժողովը պաշտօնապէս բանալէ ետքը
անոր նախագահութիւնը կը յանձնէ իր
Աթոռակցին և ինքը կը մեկնի Վեհա-
րան:

Օրակարգի խնդիրներն եղած են Ա.
Թեմական կազմակերպութիւն. Բ. Ա-
մուսական խնդիրներ. Գ. Կրթական
խնդիրներ. Դ. Եկեղեցական յարաբե-
րութեանց խնդիրներ. և ուրիշ երկրոր-
դական հարցեր: Կարեւոր որոշումներէն.

1. Լաւորդիկէի առաջնորդութիւնը
կոչել «Անտիօքի Առաջնորդութիւն»,
անոր կցելով Ալեքսանդրէթի Ազատ
Սանճագը, Անտիօքի և Սուէյտի շրջը-
ջանները: Հալէպի Թեմին ենթակայ
Համայնի, Հօմսի, Սէլիմիէյի շրջանները
կցել Դամասկոսի Թեմին:

2. Ամուսնութեանց համար հաստա-
տուն պահել ազգականութեան միջև
հինգերորդ աստիճանը:

Նշան օրհնէքի և հարսանեկան հան-
դէսներու մասին հրահանգ մը պատ-
րաստել զանոնք աւելի վայելուչ, պարզ
և նուազ ծախսալից ընելու համար:

Ամուսնալուծումի կանոնագիր մը
մշակել:

3. Նախապէս որոշուած Կրթական
Յանձնախումբի մը միջոցաւ նախակըր-
թութեան միօրինակ ծրագիր մշակել և
անոր գործադրութիւնը ապահովել
կրթական քննիչով մը:

Դպրոցներու մէջ կրօնի ուսումը
պարտաւորիչ ընել, պէտք եղածը կար-
գադրել որ աշակերտները եկեղեցի յա-
ճախեն:

Կիրակնօրեայ դպրոցներու համար աւելի յարմար անուն մը տալ, կիրակնօրեայ դպրոցներու ԺԱ. Միջպագային համաժողովին զրկել Տիար Լ. Զէնեանը, որուն գործունէութիւնը յաջորդ երեք տարիներու համար եւս երկարել:

4. Դրացի օտար եկեղեցիներու ինչպէս նաեւ Հայ Կաթօլիկ և Հայ Աւետարանական եկեղեցիներու հոգեւոր պետերուն հետ սիրալիր և բարեօք յարաբերութիւն մշակել:

Նկատելով որ «Հաւատոյ և Կարգի Համաժողով»-ին նախապատրաստականին կողմէ 1932ին Պատըն գումարուելիք ժողովին մասնակցելու համար էջմիածընի, Կիլիկիոյ և Երուսաղէմի Աթոռներէն մէկ մէկ ներկայացուցիչ ուղարկած է, սկզբունքով ընդունիլ նման ժողովներու մասնակցութիւնը երբ դաւանական բնոյթ չունենան, եւ ներկայացուցիչները որոշել Մայր Աթոռի հետ համաձայնութեամբ:

ՄՈՒՄ ՊՈՒՃԷ լուր կը տրուի թէ ներկայիս հոն 50 հայ ընտանիքներ կան, զուրկ տէէ հոգեւոր պաշտօնեայէ և կրթական գործիչէ: 90 տարիքը անցած հայուհի մը կիները իր շուրջը կը հաւաքէ և անոնց Ս. Գիրքէն կը կարդայ, և անոնցմէ ոմանց ալ կարդալ կը սորվեցնէ: Օրհնեալ է աշխատանքը հայ մամիկ:

ՎԵՐ. Ա. Ա. ՊԵՏԻԿԵԱՆ Ամերիկայի Հայ Աւետ. Միութեան նախագահը, այցելած է Նիւ Ինկլէնտի 9 Հայ Աւետ. Իկեղեցիները: Այցելութեան նպատակը եղած է եկեղեցիներու միջեւ միութեան կապը, եղբայրական փոխադարձ շահագրգռութիւնը զօրացնել:

ՊԱՍՐԱՑԻ հայոց թիւն է 648 (127 ընտանիք): Ունին դպրոց մը 99 տաւկերտներով, որոնցմէ 41 ը մանչ, կտն նաեւ 5 Ասորի մանուկներ: Հոգեւոր հովիւն է Տ. Մեսրոպ քհնյ. Օրջանեան:

ԿԷՏԷԿ ՓԱՇԱՅԻ եկեղեցիին մէջ (Կ. Պոլիս) Հայ Աւետարանականները իրենց տարեկան մէկ ժողովին մէջ որոշած են կառուցանել նոր եկեղեցական շէնք մը երկու հարկերով: 12000 տաւար ծախք նախատեսուած է, որուն 5000 ը պատրաստ միայն:

ԵՌԻԿՈՍԼԱՎԻՈՅ Կարմիր Խաչը Հայաստան ներգաղթողներու ի նպաստ կոչ մը ըրած է, և 100 մանուկներու համար հագուստեղէն հաւաքելով Աթէնք զրկած է: Հայեր ևս մասնակցած են կոչին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ կը գտնուի Անդրկովկասի Անասնաբուժական հիմնարկութիւնը որ Երեւանի մէջ իր անդրանիկ շրջանաւարաններու հանդէսին մէջ վկայական առած են 46 Հայ, 20 Վրացի, 14 Ատրպէյճանցի և 14 զանազան ազգերէ անձեր:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼԻԲԱՆԱՆԻ բնակչութիւնը Մարդահամարի վերին Յանձնարումներ յայտնութեան համեմատ, կը բաղկանայ 834, 429 հպատակներէ և 22 305 օտարներէ: Ասոնցմէ զատ գաղթական Լիբանանցիներու թիւն է 241 617:

ՈՒՈՒԿԻ Հնախօսական Առաքելութիւնը նշանաւոր Բարեւոյնի Աշտարակին մնացորդները գտած է, Լոնտոնէ տրուած լուրի մը համաձայն:

Միացեալ Նահանգաց մէջ 10000 գիւղեր կան՝ զուրկ տէէ տեսակ Հրեայ, Կաթօլիկ կամ բողոքական եկեղեցիէ մը:

30000 գիւղեր կան զուրկ մշտաբնակ հովիւէ մը:

13 միլիոն 400 հազար 12 տարիքէն վար մանուկներ ունէ կրօնական դաստիարակութիւն չեն ընդունիր ներկայիս:

Ամերիկայի ընդհանուր բնակչութեան կէսէն աւելին տէէ կրօնական հաստատութեան հետ կապակցութիւն չունի:

FURST MNESS Ի ԱՌՈՂ-ՋԱՊԱՀԱԿԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նշանաւոր են իրենց մաքրութեամբն ու շինիչ ազդեցութեամբը,

ուստի

անարիւններ, տկարներ, հիւանդութենէ և վիրաբույժական գործողութենէ
նոր ապաքինողներ, պէտք է գործածեն

Furst mcness'

EXTRACT OF COD LIVER OIL TONIC

Կոչուած բաղադրութիւնը, որ կը պարունակէ մաքուր ձկան իւղ (կենսահիւթ
ԱԱ և «Դ»), մալթ, վայրի կեռաս, քինին, ընտիր դինի, երկաթ, մանկանէզ,
և այլն:

Մեծապէս ԱՆՈՐԺԱՀԱՄ է, ԱՐԻՒՆԻ ԿԱՐՄԻՐ ԳՆԴԻԿՆԵՐԸ ԿԸ ԶՕՐԱՑՆԷ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՐՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ Կ'ՈՒԺՈՎՑՆԷ:

ՀԱԶ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԵՒ ԶԱՓԱՀԱՍՆԵՐ

պէտք է գործածեն

Mcness mentholated cough syrup

Բաղադրութիւնը,

կը պարունակէ զանազան ծառերէ, բոյսերու արմատներէ քաղուած հիւթեր և
միջոց:

Բորբոսած եւ գրգռուած կոկորդի քաղանքներուն վրայ կ'ազդէ, կոկորդը եւ
խոչափողը կը մաքրէ եւ «կ'իւղոսէ»: Ախորժախամ եւ անուշ է:

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԲՈԼՈՐ ՅԱՅՏՆԻ ԴԵՂԱՐԱՆՆԵՐԸ

صاحب الامتياز والمدير المسئول القصر ق. هارونيان

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱՆԻՊ, 23 ԱՊՐԻԼ, 1932

ԹԻԻ 6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ՍԲՈՒՆ ԱՎ ԲԻԼԵՆԴԻ ԴԵՄ

Տ. Ճ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԿԻԼԻԿԻԱ ԱՍՈՐԵԱՏԱՆԵԱՅԳ ՕՐՈՎ

ՎԵՐ. Ե. ԳԱՍՈՒՆԻ

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ԱՐԴԻԱԿԱՆՈՒՔԵԱՆ ԴԵՄ

ՎԵՐ. Կ. ԱՏԱՆԱԼԵԱՆ

ՀՈՎԻՏԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

ԴԵՍԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԳԱՂԵՑ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱԼԵՏ. ՄԻՈՒՔԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎՐ

Տ. Ճ. Խ.

ՀԱՅ ԿԵԱՆՔ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՏԳԱՐԱՆ ԳՈՂԵՑ ՀԱՆԻՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, տարեկան բաժնեգրին է 150 դրուշ սուրի. Սուրիոյ համար, և մէկ աւելի տուլար՝ սուրիշ բաժար երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն ղըրկուիր եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ. չհրատարակուող յօդուածներու համար պէտք է ղըրկել փոստի ծախար:

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկ էջին վրայ մեկանով, դիւրընթեռնի մաքուր կերպով:

ՓԻԼԱՐՏՈՍ ՀԱՅՐ

ԳՐԵՑ՝ ԿՈՄՄԱԳԵՆԱՑԻ

Կոմագենացին հմուտ պատմագէտ մըն է որ գիտէ հաճելի ոճով ներկայացընել անցեալի գէպերը: Հատորս 15 գլուխներով գեղեցիկ եւ քննական ուսումնասիրութիւն մ'է Հայոց Պատմութեան Կիլիկիան շրջանին սկզբնաւորութեան մասին: Գինն է 10 Ֆրանք Սուրիոյ համար, կէս տուլար ուրիշ երկիրներու համար: Ծաւալն է 95+ԺԶ էջ: Դիմել «Նոր Աւետարան»ի հասցէին:

«ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ»Ի ՄԱՏԵՆԱՇԱՐԸ

Պատանիներու ընթերցանութեան համար կրթիչ գիրքերու պակասը խիստ զգալի է: Այս կէտը նկատի առնելով «Նոր Աւետարան»ի խմբագրութիւնը այս անգամ հրատարակած է՝

ԲԱՐՈՅԱՎԷՊԵՐ

անուն հատորիկ մը, որ կը պարունակէ խիստ հետաքրքրական և բարոյացուցիչ 15 իրական պատմութիւններ և պատմուածքներ: Ամէն պատանի, ինչպէս նաեւ դաստիարակներ և ծնողներ շատ օգտակար պիտի գտնեն զայն: Գինն է 25 դրշ. սուրիական (կամ 50 անթ Ս. մերիկայի և Եգիպտոսի համար): Դիմել խմբագրութեան հասցէին: